# Ես ինձ սիրված եմ զգում



**Դերին Բ., 9 տարեկան, Յուտա (ԱՄՆ)**

Ես բժշկական խնդիրներ ունեմ, որոնք իսկապես ծանր են եղել: Ես ի ծնե տարբերվում եմ ուրիշներից, չունեմ լոգարանից օգտվելու որևէ միջոց: Ես երեք մեծ վիրահատություն եմ տարել և մի քանի փոքր:

Երբեմն ես մտածում եմ, թե ինչու եմ ես այդպիսին, բայց Աստծո և Նրա փրկության ծրագրի մասին մտածելն օգնում է ինձ հիշել, որ ես նույնքան սիրված եմ, որքան բոլորը: Ավետարանի մասին վկայություն ունենալը հրաշալի է, և ես գիտեմ, որ կարող եմ ապավինել Տիրոջը:

Ես շատ եմ սիրում իմ մարմինը: Ես գիտեմ, որ ես իսկապես լույսի պարգև եմ (դա իմ անվան նշանակությունն է): Չնայած ես պայքարում եմ դժվարությունների դեմ, ես գիտեմ, որ միշտ կարող եմ Աստծուց օգնություն խնդրել:



ՆԿԱՐԻ ՀԵՂԻՆԱԿ՝ ԱԼԻՍԱ ՋՈՆՍՈՆ